ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 58

«30» 06 2020թ. գ. Երևան

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ, ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակառուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը: Այնուհետև, կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը: Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային

ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատվել են ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 909-Լ որոշմամբ:

Իրականացվող դատաիրավական բարեփոխումների ընդհանուր համատեքստում թվարկված ռազմավարությունները և ազգային ծրագիրը ուղենշային նշանակություն ունեն դատաիրավական համակարգի կատարելագործման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ապահովման, իրավապահ մարմինների կարողությունների շարունակական բարելավման տեսանկյունից: Հիշատակված ռազմավարություններից բխող գործողությունների ծրագրով նախատեսված մի շարք գործողությունների և միջոցառումների համար որպես համակատարող է նախատեսված նաև ՀՀ դատախազությունը, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել սահմանել ՀՀ դատախազության այն պատասխանատու ստորաբաժանումների շրջանակը, որոնց գործառույթներին առնչվող ոլորտներին է առավելապես վերաբերում նախատեսված միջոցառումների իրականացումը:

Հիմք ընդունելով հիշատակված ակտերով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների իրականացման համար նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանում նշանակել ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը (վարչության պետ՝ Արտակ Հարությունյան):

3. Սույն հրամանի հավելվածի առանձին տողերում նշված առաջին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին՝ մյուս պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հետ (առկայության դեպքում) մշակել աշխատանքային ժամանակացույց այնպես, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, վերոհիշյալ իրավական ակտերով նախատեսված՝ ՀՀ դատախազության կողմից շահագրգիռ պետական մարմիններ տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետից առնվազն երկու շաբաթ առաջ, ներկայացվի ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

4. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանին՝ ապահովել ստացված տեղեկատվության համակարգումը և սահմանված ժամկետներում տրամադրումը շահագրգիռ պետական մարմիններին:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի
հունիսի 30-ի N 58հրամանի

1. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ		
Գործողությունների ծրագրի համապատասխան կետը	**Բովանդակությունը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
2019-2020 թթ. գործողությունների ծրագրի նպատակ 10, գործողություն 1	Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխելով էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
2019-2020 թթ. գործողությունների ծրագրի նպատակ 10, գործողություն 2	Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
2019-2020 թթ. գործողությունների ծրագրի նպատակ 10, գործողություն 4	Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչություն (Վահե Ռաֆայելյան) Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար)
2021-2023 թթ. գործողությունների ծրագրի նպատակ 10, գործողություն 1	Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը	Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)

2. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ		
Միջոցառումների ծրագրի համապատասխան կետը	**Բովանդակությունը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
N 2	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 4	ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 7	15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան)
N 9	Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 31	Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) Աշոտ Ժամկոչյան (ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ)
N 33	ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն

	չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 34	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում	Հայկ Ասլանյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ ընդհանուր համակարգում) ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արմեն Փանոսյան)
N 35	Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար)
N 36	Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով	Արմեն Հարությունյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ ընդհանուր համակարգում) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն

		(Արմեն Մարուխյան) Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար) Գևորգ Թովմասյան (ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական)
N 38	Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արմեն Փանոսյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
N 39	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում	ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն
N 40	Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 41	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն

		վարչություն (Արմեն Փանոսյան) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)

3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Գործողությունների ծրագրի համապատասխան կետը	Բովանդակությունը	Պատասխանատու ստորաբաժանումը
N 4	Սահմանել ՀՈՒ-ում և ՔԿՀ-ներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ	Վահե Հարությունյան (ՀՀ զինվորական դատախազ), ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Գրիգորի Պողոսյան)
N 5	Քրեականացնել ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան	ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն (Արտակ Հարությունյան), ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 6	Օրենսդրորեն ամրագրել ընտանեկան բռնությունից և կանանց նկատմամբ բռնությունից տուժած անձանց արդյունավետ պաշտպանության դատավարական երաշխիքները՝ միջազգային չափանիշներին համապատասխան	ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն (Արտակ Հարությունյան), ՀՀ գլխավոր դատախազության

		կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 7	Վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների ու բուժաշխատողների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների համար	Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար)
N 14	Օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 15	Մշակել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն (Արտակ Հարությունյան),
N 26	Վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, հոգեբուժական, երեխաների խնամքի հաստատությունների աշխատողների, քրեակատարողական ծառայության ծառայողների և բժշկական անձնակազմի համար	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան)
N 30	Օրենսդրորեն սահմանել բացատրություն վերցնելու կարգը	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն

		(Արմեն Մարուխյան)
N 31	Վերանայել բերման ենթարկելու կարգի իրավական կարգավորումները	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն (Արմեն Աֆանդյան) ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 32	Օրենսդրորեն ամրագրել «հանցագործության մասին հաղորդման» հասկացությունը՝ հստակեցնելով հաղորդման բովանդակությանը ներկայացվող պահանջները	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 33	Օրենսդրորեն ամրապնդել իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանության երաշխիքները	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 34	Իրականացնել վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար	Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար)
N 35	Կատարելագործել վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ անձի ծանուցմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
N 80	Օրենսդրորեն սահմանել քրեական արդարադատության ոլորտում երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) Գայանե Գասպարյան (ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ)